Դ.

Ս. Լուսաւորչի այն նշխարների մէջ, որոնք գտնուումէին Հայաստանում իբրև Ս. մասունք, առաջին և նշանաւոր տեղը բռնումէ նորա Ս. Աջը։ Հայոց Հայրապետական աթոռից անբաժան էր այդ սրբութիւնն ամէն տեղ և ամէն ժամանակ. Հայրապետութեան նուիրական և վաւերական նշաններից մէկն այն էր իսկապէս, որ Ս. Գրիգորի առաքելական փոխանորդ ճանաչուած հովուապետը նորա Ս. աջով օրհնէր ազգին և բաշխէր նորա օրհնութեամբ օծութեան Ս. իւղը։ Թէ երբ անջատուեցաւ Ս. մարմնից մեր նախահայրապետի բազուկը, իբրև առանձին սրբութիւն դրուեցաւ Վաղարշապատու Մայր Եկեղեցին և ապա փոխադրուեցաւ աթոռի հետ Դուին, յայտնի չէ։ Սակայն պարզ է, որ Ե. դարում Ս. Աջն է եղել Հայոց նախարարներին դիմաւորելու ժամանակ հանդէս բերուած այն մասունքը, որ յիշումէ Փարպեցին, այդ երևումէ Զենոն կայսեր մասին պահուած աւանդութիւնից։ Մի յիշատակարանում ասուած է թէ Ս. Լուսաւորչի նշխարաց գիւտն իմանալով, Զենոն մարդիկ ուղարկեց Հայաստան և բռնութեամբ Բիւզանդիա տանել տուեց բոլոր նշխարները բացի Ս. Աջից, «և ետ, ասումէ, զաջ ձեռն Հայոց վասն Լուսաւորելոյն յառաջագոյն զնոսա, և